

ՀԱՅ ՈՍԿԵՐԻՁՆԵՐՆ ՈՒ ՑՈՒԵԼԵԱՆԸ

Մեծ Յօրելեանին յիշատակներուն մէջ
գեղեցիկ ձեռակերտ մը ըլլալ կոչուած է
այս գեղարուեստական աշխատութիւնը
դոր ի գլուխ հանեց Հայ Ռոկերիչներու
արհեստաւորութիւնը : Խնչպէս գրեցինք,
այս աշխատութիւնը կ'ներկայացնէ ձոյլ
արծաթ կոթող մը, ողատուանդանով, ո-
րուն վրայ դժոշմուած են Հայ գրերն ոս-
կի, համակ ընդելուզեալ գոհարներով :
Պատուանդանը կ'կը վերտառութիւն մը :
Հայ ոսկերիչներն իրենց արուեստին բո-
վանդակ նրբութիւնը թափած են այս
գեղարուեստական աշխատութեան հա-
մար, որ կրկնապէս պատիւ կ'թերէ իրենց,
թէ՛ յղացման և թէ՛ շինութեան տեսա-
կէտով : Հայ Ռոկերչութիւնը պատիւ բե-
րած էր միշտ Հայ Արուեստին, իրը
հայթայթիչ Արքունիքի և Արքունի շըր-
ջանակներու, Թուրքիոյ և Սղիպտոսի
մէջ, ու Եւրոպայի մէջ ալ միշտ գտնուած
էր առաջին գծին վրայ : Մեծ Յօրելեա-
նին առթիւ Մայր Աթոռին ըրած իրենց
այս հիանալի նուէրը միանգամայն պիտի
ըլլայ յաւերժական յիշատակ մը Հայու-
թեան Աւագ կեղրոնին մէջ, Հայ Ար-
ուեստին մէկ շատ նրբին ճիւղին : Վաղ-
ուան հանդէաներուն պիտի ցուցադրուի
այս գեղեցիկ կոթողը :